

ՊԱՅՄԱՆՔ

Յարեհան գին Կ. Պոլսոյ հմր. 10 լիւր
Պաւստաց 2 լիւր
Վեցամս. Կ. Պոլսոյ 5 լիւր
Պաւստաց 1 լիւր
Օտար երկիրներու 30 Ֆր.
Պանուցման տուոյ մէկ անգամի հա-
մար 3 զուրուկ երկու անգամի հա-
մար 2 զուկ 5. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Խրաքանչիւր թիւ 40 փարս պղինձ :



ԼՐԱԳԵՐ

ՀԱՆԱՊԱՋՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու
ծախքը խմբագրութեան վրայ է :
Լրագրաց վերագրեալ ծառայ
կամ որ և իցէ գրութիւն տրագրի
— ճնորդին ախար ուղղութիւն : Պայմա-
թիւս լրագրագրութեան համար թիւ
198, Նոթո խան, Պաւստաց գրասեն-
եակը :
Հանրու ծախքը ճանրուած հա-
մար չընդունուիր :
Չպարտաւոր ծառայ, յորտեմ, և
ես չեն արուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 12 ԱՊՐԵԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Դեր. Հասունեանի խնդրոյն նը-
կատմամբ Բ. Դրան քրիստոնեայ դիւա-
նագիտաց ուշադրութիւնն հրաւիրելը
Հասունեանի կղերն՝ իւր սովորական
աններողութեամբ՝ Հայոց աղբիւն մե-
ծադոյն մասին «ոչ—միացեալ» անունը
կուտայ, որ հերձուածող բառին մեղ-
մէն է գրելով : Բայց այսպիսի բառ
մ'Օսմանեան քրիստոնեայ գիււանա-
գիտաց դրչէն ալ ելնելու բնաւ պատ-
ճառ մը չկայ, և դարմանօք կարգա-
ցինք զայն վերայիչեալ պաշտօնական
գրութեան մէջ : Պէտք է գիտնալ
սակայն որ հնուց 'ի վեր, ըստ բոլոր
աղբային պատմագրաց, Հայերը
պարզապէս «Հայ» կը կոչուին և իրենց
եկեղեցին «Հայաստանեայց եկեղեցի»
ուստի «ոչ—միացեալ» տիպոյսը բը-
նաւ չեն ճանչեր : Գրիգորեան անունն
իւր թարգմանութիւն «Լուսաւորչա-
կան» բառին՝ Ուստի մէջ հնարուած
է : Բայց ամենէն ուղիւն են «Հայաս-
տանեայց եկեղեցի» և «Հայ հաս-
տակութիւն» տիպոյսները, թողլով
որ կաթողիկէ Բողոքական Հայք ի-
րենց մասնաւոր անուններով ճան-
չուին : Իսկ Հայաստանեայց եկեղե-
ցւոյ դաւանութեան դալով, հնուց
'ի վեր նա ուրիշ քրիստոնեայ եկեղե-
ցիներն հաւասար քոյր կը ճանչէ,
բայց ինքնօրէն և ուղղափառ է, և
իրեն արուած «ոչ—միացեալ» տիպոյսը
չընդունիր : ուստի պէտք է որ այս-
պիսի տիպոյս մը, որ աղբային գիւ-
րագրածութեանց կը դալի, մանա-
ւանդ պաշտօնական գրութեանց մէջ
անհետանայ, և ինչպէս որ չէ կարելի
ըսել «ոչ—միացեալ» թոյնը, պէտք չէ
ըսել նաեւ «ոչ—միացեալ Հայք» :

Այս դիտողութիւնն ետեւ չեմք
կրնար լուծութեամբ անցնել նաեւ Գեր-
Հասունի այն ընթացքին վրայ, որով
իւր հասարակութեան իրաւունքն ու
արտօնութիւնները վաճառք մ'ըրած
է իւր փառասիրութիւնն առաջ տա-
նելու համար : Երբեմն զանոնք Հոռ-
մի Բողոքականացին թողած էր, հի-
մայ ալ Բ. Դրան կը յանձնէ : Բայց
մէկը կայ որ անոր չգարձներ, այն է
Հայ կաթողիկէ հասարակութիւնն, որ
բուն իրաւունքն տէրն է :

Գաղղիական թան լրագիրը կը
յայտարարէ թէ բոլոր կաթողիկէ Հա-
յոց թիւն հազիւ յիսուն հազարի կը
հասնի, որոց մէջ 12 հազար Հակա-
հասունեանք կան, և կը մնան 38,000
Հասունեանք, թէ և այս վերջինք իրենց
թիւն 80 կամ մինչև 100 հազարի կը
հասնեն : Թան իրաւացի կը գտնէ
Գեր. Հասունի դէմ Հայոց այն դան-
դաւոր թէ իրենց աղբութիւնը կ'որ-
ծանել կուզէ, և կը յարէ թէ այս դան-
դաւոր երեւակայական չէ, քանզի Գեր.
Հասուն՝ իրօք կաթողիկէ Հայերը կը
ըստինայնէր, և եկեղեցեաց քարոզ-
ներուն՝ ինչպէս նաեւ ընտանեայց մէջ
թուրքերէն լեզուն մոյոյցած էր :
Թան կը մեղադրէ դարձեալ Գաղղիոյ

Արեւելեան դիւանագէտներն, որք փո-
խանակ աղաատութեան սկզբանց և ար-
դարութեան պաշտպան կանգնելու,
կղերականութիւնը կը պաշտպանեն,
և Գաղղիա հակառակութեան մէջ կը
ձգեն : Գաղղիա համակրութիւն կըն-
դունի, կըսէ, ոչ թէ կաթողիկէ այլ
աղաատական լինելուն համար : ուստի
պէտք է որ աղաատական սկզբունք չը
խոսորի : Դոյն դիտողութիւնները կը-
նէ նաեւ Պ. Կամպէթթայի լրագիրը,
Ռէբիւլիք Զրանոնէդ : Գոհ եմք ու-
րեմն, որ այս խնդրոյն վրայ մեր գի-
տողութիւնները Գաղղիոյ հասարա-
կայ կարծեաց ամենէն կարեւոր բե-
րաններէն ալ հաստատուած կը տես-
նեմք :

Մէմօրիալ Տիբլումթիք լրագրին
խօսքին նայելով, Օսմանեան փոխա-
ռութեան մը յաջողութիւնն հաւա-
նական կը թուի, թէ և միւս կողմա-
նէ հակառակը ծանուցանող լուրեր
ալ պակաս չեն :

Լոնտոնայի Օսմանեան դեսպա-
նը, կըսէ յիշեալ թերթը, Պ. Համան-
տի և Պ. Պուլիքիի հետ բանակցու-
թեան մտած է 10 միլիոն լիւրայի
նոր փոխառութիւն մը կնքելու հա-
մար : Դեսպանը դոհ լինելու պատ-
ճառներ ունի 1838 թ և 1862 թ փո-
խառութեանց անգղիացի արժեթղ-
թատեայց բարեկամական արամագ-
րութիւններէն : Չուղեւով որ դադ-
ղական շահերն անտես լինին, 1860 թ
և 1868 թ փոխառութեանց գաղղիա-
ցի արժեթղթատեայրերն ալ պիտի հը-
րաւորէ այս դործողութեան մասնակ-
ցիլ Բ. Դրան և անգղիացի արժեթղ-
թատեայց միջև կնքուելիք պայմա-
նագրութիւնն յարմար ժամանակին
անոնց հաղորդելով :

Այս փոխառութիւնն Օսմանեան
տէրութեան օգնութիւն մ'է առա-
ւել քան թէ երկրական դործողու-
թիւն մը, որովհետեւ Անգղիայի ար-
ժեթղթատեայրը, իրենց սեփականու-
թիւնն ուղանուն պէս դործածելով
մեծ մասն յօժարովամբ թուրքիոյ կը
թողուն՝ նորա նեղ վիճակին օգնու-
թիւն մ'ընելու համար :

Անգղիացի շահամոյ դրամատեսուրց
կողմէ այսպիսի վեհանաճական գոհ-
րութիւն մը դժուարահաւատայի կը
թուի : Ըստ մեր կարծեաց, թուրքիոյ
երկրական վիճակը բարւոքելու միակ
միջոցն արտաքին փոխառութիւնները
չեն, որչափ և շահաւոր պայմաններով
կնքուին, վասն զի առ ժամանակեայ
օգնութիւն մը միայն ընձեռելով
երկրին բեռը մշտնջենապէս կը ծան-
րացնեն : Արտաքին փոխառութիւնը
այն ժամանակ միայն կրնան օգտա-
կար լինիլ երբոր ներքին նոր հասոյթ-
ներ գոյացնելու ծառայեն և ոչ թէ
ներքին և արտաքին սովորաւոր և

անտոկոս պարտքեր վճարելու գոր-
ծածուն, որ պարտաւոր փոխելէ և
նորանոր տոկոսներ աւելցնելէ զատ
ուրիշ նշանակութիւն չունենար :

Լէվանթ Հերալտ լրագիրը վեր-
ջին օրերս Եւրոպիոյ մէջ եղած փո-
խառութեան փորձերուն անյաջո-
ղութեան պատճառները քննելով՝ կը
հարցնէ իրաւամբ թէ կարելի չէ՞ ար-
դեօք որ թուրքերն իրենց երկրական
վերածնութիւնն իրենց ձեռք կա-
տարելու աշխատին, քան թէ մշտն-
ջենապէս նեղուկներ դործածելու զի-
ջանին : Յունաստան իւր երկամուտքն
ինք կը մատակարարէ իւր պետական
պանքային և ուրիշ պանքայից օգ-
նութեամբ : Ընդէ՞ր թուրքիա ալ
նոյնպէս չընէ : Օսմանեան երկամուտ-
քըն ալ ուրիշներուն պէս է : Կանա-
րով, ուղղութեամբ, խոհեմութեամբ
և գործնական հմտութեամբ պէտք է
կառավարուի : Եթէ չկայ թուրք փա-
շա մը, որ այդ անհրաժեշտ հանգա-
մանքն ունենայ, իւրիշ Սուլթանը կըր-
նայ ուրիշ տեղէ մարդ վնասել և ի-
րեն երկամուտք նախարար անուանել :
Լէվանթ Հերալտ կը պնդէ թէ տէրու-
թեան ներկայ երկրական վիճակին
մէջ չկայ այնպիսի մեծ դժուարու-
թիւն մը, որուն հանճարեղ և պար-
կեշտ նախարար մը չկարողայ յաղ-
թել : Երկամուտք թուրք նախարարե-
րն այնպէս կը թուին կարծել թէ
իրենց պաշտօնը փոխառութիւն կըն-
քել է, և այն նախարարն որ խոշոր
փոխառութիւն մը կնքելու յաջողի,
երկրական հանճար մը կը համարուի :
Երկամուտք նախարար պէտք է հաս-
կնան թէ իրենց պաշտօնն ոչ թէ
փոխառութիւններ կնքել է, այլ ե-
կամուտ գոյացնել աղբային հարրո-
տութիւնն աճեցնելով : Մինչև այսօր
բնաւ ջանք մը չեղաւ այս մասին, և
երկամուտք նախարար փառանքներն ա-
պիկարութիւնն երկրորդ տարիներէ 'ի
վեր այն ատիճանի հասած է, որ
տէրութեան բոլոր եկամուտներն ու
հանքային արտադրութիւնները գը-
րաւի դնելէ ետեւ, հիմա ալ անոր
երկրական անկախութիւնը դրաւի
դնել կ'առաջարկեն՝ քանի մը միլիոն
աւելի ձեռք բերելու համար : Այս է
ներկայ վիճակին կատարեալ ճշմար-
տութիւնը : Վեհ. Սուլթանին նկատու-
ղութեան արժանի է քննել թէ տէ-
րութիւնը՝ լաւ դործելու ընտրելով
միջէ չի՞ կրնար ինք կատարել իւր ե-
րկրական վերածնութիւնն, առանց
իւր յարաբերութիւնները կնճառուե-
լու ուրիշ երկիրներու հետ, այնպի-
սի բարենորոգումներ ընելով, որք
կատարելապէս իրենք լինին և աղբա-
յին մշտապէս բարդաւաճման մը հի-
մունքը ձգեն :

